

**«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱԳՈՒՅԹԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԻ
ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ԱՆԱՀԻՏ ՄԱԿԱՐՅԱՆ

Տիպաբանության տեսանկյունից հետաքրքրական է «ազատություն» հասկացության զուգադրական վերլուծությունը, քանի որ վերջինս հնարավորություն է տալիս վեր հանելու զուգադրվող լեզուների լեզվամշակութային առանձնահատկությունները: Ինչպես հայտնի է, հասկացության ուսումնասիրությունը կատարվում է ըստ երեք հիմնական մակարդակների՝

ա. բառարանային (իմաստային դաշտերի ուսումնասիրության միջոցով)

բ. դարձվածաբանական (դարձվածային միավորների ուսումնասիրության միջոցով)

գ. համատեքստային (տարբեր ոճերի տեքստերի ուսումնասիրության միջոցով):

Հոդվածի շրջանակներում ներկայացվում է «ազատություն» հասկացության բառարանային սահմանումների վերլուծությունը, ինչպես նաև ուսումնասիրվող հասկացության իմաստային դաշտի առանձնահատկությունների վերհանումն անգլերենում և հայերենում:

“Oxford Advanced Learner’s Dictionary”, “Oxford Advanced Dictionary of Current English”, “Longman Dictionary of Contemporary English”, “Collins English Dictionary”, ինչպես նաև «Արդի Հայերենի Բացատրական Բառարան», «Ժամանակակից Հայոց Լեզվի Բացատրական Բառարան» բացատրական բառարանների ուսումնասիրությունը (անգլերենում և հայերենում) ցույց է տալիս, որ «ազատություն» հասկացությամբ անգլերենում դրսևորվում է երկու բառերի միջոցով, որոնք են՝ “freedom” և “liberty”, մինչդեռ հայերենում այն արտահայտվում է մեկ բառով, այն է՝ «ազատություն»:

“Freedom” և “liberty” բառերի բառարանային սահմանումներից համընկնում են հետևյալ իմաստները՝

1. ուրիշների կողմից սահմանափակումներ չունենալը, ազատ գործելը
2. ազատ լինելը (բանտարկությունից, ստրկությունից և այլն)
3. քաղաքական ազատություն ունենալը¹:

¹ Oxford Advanced Learner’s Dictionary, 6th ed. (2005), Oxford University Press Collins

Հետաքրքրական է, որ համընկնումների հետ մեկտեղ “freedom” և “liberty” բառերն ունեն նաև իմաստներ, որոնք տարբերվում են իրենց հիմնանշանակային իմաստներով: “Freedom” բառն օգտագործվում է որևէ անցանկալի երևույթի ազդեցությունից ազատ լինելու /վախից, ցավից, քաղցից/ իմաստով, որը, սակայն, առկա չէ “liberty”-ի սահմանումների մեջ: Կամքի ազատությունը «ազատություն» բառի կարևորագույն իմաստներից է, քանի որ փիլիսոփայական տեսանկյունից «ազատությունը» դիտվում է որպես կամքի ազատություն: Անգլերենում վերջինս արտահայտվում է “freedom” բառով՝ “freedom of the will”: “Freedom” բառի սահմանումների մեջ առկա են նաև արտոնություն, առավելություն, շարժումների ազատություն իմաստները, որոնք բնորոշ են միայն անգլերենին:

“Freedom” և “liberty” բառերի տարբերության մասին խոսել է ամերիկացի լրագրող և գրող Ջ. Գոլդբերգը, ով նշում է, որ «ազատությունը» /freedom/ մեզ տրվում է բնությունից, իսկ «ազատությունը» /liberty/ այն չէ, ինչ մենք ունենք ծնված օրվանից, այլ դա քաղաքական կարգավիճակ է: Այն, ինչ երաշխավորվում է Սահմանադրությամբ, արտահայտվում է “liberty” բառով²:

Այժմ անդրադառնանք «ազատություն» բառի բառարանային սահմանումներին հայերենում: Անգլերենի և հայերենի բացատրական բառարանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անգլերենի իմաստները գերազանցում են հայերենին: Ակնհայտ է, որ հայերենի բոլոր իմաստները համընկնում են կամ “freedom”, կամ “liberty” բառերի իմաստների հետ: Հետաքրքրական է, որ մեր կողմից ուսումնասիրված բոլոր հայերեն բառարաններում քաղաքական ազատություն, ժողովրդի իրավունքը՝ ազատ կերպով տնօրինելու իր պետական, հասարակական, տնտեսական կյանքը իմաստը առաջինն է, որին այնուհետև հաջորդում է ազատ լինելը իմաստը: Անգլերենում, ճիշտ է, քաղաքական ազատություն իմաստը հանդիպում է թե՛ “freedom” և թե՛ “liberty” բառի սահմանումներում, սակայն ոչ առաջին իմաստով: Այս փաստն իհարկե ընդգծում է այս երկու լեզուներով խոսող ժողովուրդների լեզվամտածողությունը: Հայ ժողովուրդը, դարեր շարունակ լինելով այլ պետությունների իշխանության տակ, միշտ ձգտել է քաղաքական, տնտեսական, ինչպես նաև մշակութային ազատության, ինչն էլ հենց արտացոլվում է «ազատություն» բառի սահմանման մեջ:

English Dictionary, available online at: [<http://www.collinsdictionary.com>] last retrieved on 20/09/2013.

² Goldberg J. (2000) *Liberty, Freedom and The French Maid*, available online at: [<http://old.nationalreview.com>].

«Ազատություն» հասկացության լեզվական առանձնահատկությունները, ինչպես նաև հասկացական արժեքը վեր հանելու նպատակով կատարվել է «ազատություն» հասկացության իմաստային դաշտերի ուսումնասիրություն անգլերենում և հայերենում: «Ազատություն» հասկացության իմաստային դաշտի ուսումնասիրությունը և վերլուծությունը անգլերենում և հայերենում ցույց են տալիս, որ այն երկու լեզուներում էլ ունի հստակ կառուցվածք: Ըստ խոսքի մասերի պատկանելության՝ ուսումնասիրվող իմաստային դաշտերը կարելի է տարանջատել մի քանի բառիմաստային խմբերի՝ գոյականների, ածականների և բայերի:

Ուսումնասիրելով “Webster’s New Dictionary of Synonyms”, “Merrian-Webster’s Collegiate Dictionary”, Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», ինչպես նաև Ռոժեի էլեկտրոնային թեզաուրուս բառարանը՝ առանձնացրել ենք «ազատություն» հասկացության բառիմաստային խմբերն անգլերենում և հայերենում, որոնք ունեն մի շարք առանձնահատկություններ:

Բառարանային ուսումնասիրությունները վկայում են, որ գոյականների հոմանիշային շարքերը և տեսականիշները տարբերվում են զուգադրվող լեզուներում: Հետաքրքրական է, որ անգլերենում «ազատություն» /freedom/ հասկացության ունի ավելի շատ թվով հոմանիշներ, քան հայերենը: Անգլերենում վեր ենք հանել հետևյալ տեսականիշները՝ *կարողություն, հնարավորություն, սահմանափակումների, պարտավորությունների բացակայություն, անկախություն, ազատ գործելու հնարավորություն, իշխանություն, լիազորություն, անտարբերության, անուշադրության մատնելը, արձակում, հեռացում, վտարում*³: Հայերենում տեսականիշները ներկայացված են ավելի քիչ քանակով, այն է՝ *կամքի ազատություն, անկախություն, անկաշկանդություն, իրավունք, պարտավորություն*⁴:

Ակնհայտ է, որ անգլերենի և հայերենի տեսականիշները և դրանց մեջ

³ Roget’s 21st Century Thesaurus, Third Edition, available online at: [<http://thesaurus.com/browse/freedom>] last retrieved on 07/09/2012 .

⁴ **Աղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1976 (Aghayan E. B. (1976) Ardi hayereni batsatrakan bararan, Yerevan, Hayastan Hratarakchutyun):

Ղարիբյան Ա., Աբրահամյան Ս., Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երեւան, Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ: Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1969 (Gharibyan A., Abrahamyan S. (1969) Zhamanakacic Hayoc Lezvi Bacatrakan Bararan, Yerevan, Hrachya Acharyani anvan lezvi institut. Haykakan SSH Gitutyunneri Akademiayi Hratarakchutyun):

ընդգրկված գոյականների հոմանիշային շարքերն ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Երկու լեզուները կրող ժողովուրդների մոտ էլ «ազատությունը» զուգորդվում է *անկախության, անկաշկանդության, սահմանափակումների, պարտավորությունների բացակայության*, ինչպես նաև *իրավունքի, իշխանության* հետ: Սակայն, միևնույն ժամանակ, ի տարբերություն հայերենի, «ազատություն» /freedom/ հասկացույթն անգլերենում զուգորդվում է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ *կարողություն, հնարավորություն, անբարոյականություն, անառակություն, սանձաքնակություն, արձակում, հեռացում, վտարում*: Ինչ վերաբերում է հայերենին, ապա «ազատությունը», բացի վերը նշվածից, ընկալվում է նաև որպես *կամքի ազատություն և պարագություն*:

«Ազատություն» հասկացույթի գոյականների բառիմաստային խմբի վերլուծությունը թույլ է տալիս վեր հանել մի շարք յուրահատկություններ, որոնք բնորոշ են զուգադրվող լեզուներին: Ուսումնասիրելով «ազատություն» հասկացույթի գոյականների հոմանիշների սահմանումները՝ պարզ է դառնում, որ անգլերենում վերջինս ներկայացված է մի շարք տարբերակված եզրույթներով ըստ տարբեր բնագավառների՝ *քաղաքական, տնտեսական, առևտրային* և այլն:

Ուսումնասիրության արդյունքները կներկայացնենք ստորև բերված աղյուսակում:

Բառ	Սահմանում	Թարգմանություն
autarky	economic independence or self-sufficiency	տնտեսական անկախություն
emancipation	the fact or process of being set free from legal, social, or political restrictions; liberation	հասարակական կամ քաղաքական սահմանափակումների ազատություն
facility	ease of action or performance; freedom from difficulty	դժվարություններից ազատություն
exemption	the process of exempting a person from paying taxes on a specified amount of income for themselves and their dependents	հարկերից ազատում
franchise	an authority that is given by an organization to someone, allowing them to sell its goods or services or to take part in an activity which the organization controls (freedom in commerce)	առևտրի ազատություն

enfranchisement	give the right to vote to	ծայնի ազատություն
laissez faire	the doctrine of unrestricted freedom in commerce, esp. for private interests	անսահմանափակ ազատություն առևտրում
ease	freedom from worries or problems	հոգսերից ազատություն

Աղյուսակից պարզ է դառնում, որ անգլերենում քաղաքական, տնտեսական, առևտրային երևույթները հանդես են գալիս մեկ բառային միավորով, մինչդեռ հայերենում դրանք արտահայտվում են բառակապակցությունների միջոցով:

Անգլերենի և հայերենի գոյականների բառիմաստային խմբի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ անգլերենին բնորոշ են օտարաբանություններ ֆրանսերենից և հունարենից, ինչպես օրինակ՝ *laissez faire*, *carte blanche*, *salvage*, *autarky* և այլն:

Անգլերենի յուրահատկությունը նաև այն է, որ «ազատություն» հասկացության գոյականների հոմանիշային շարքում առկա են բառեր, որոնք կազմված են ինչպես կայուն կապակցություններով՝ *laissez faire*, *blank check*, *carte blanche*, այնպես էլ կրկնվող առաջին բաղադրիչներով՝ *free hand*, *free rein*, *free scope*, *lack of reserve*, *lack of restraint* և այլն, որտեղ կրկնվող բաղադրիչներն են՝ “*free*” և “*lack*”:

«Ազատություն» հասկացության դաշտը կազմելիս առանձնացրել ենք մի շարք հոմանիշներ, որոնք կազմված են տարբեր բառակազմական միջոցներով թե՛ անգլերենում և թե՛ հայերենում: Անգլերենում դրանցից ամենաարդյունավետներն են **un-**, **dis-** նախածանցով և **self** նախածանցակերպով կազմված բառերը:

Un – unrestraint, unconstraint, uninhibitedness,

Dis – discharge, disregard, dissolution, displacement, dislodgment,

Self – self-determination self-government, self-rule,

Հայերենի գոյականական բառիմաստային դաշտում գերակշռում են **ինքն** և **կամք** արմատներով, ինչպես նաև **ան-** նախածանցով կազմված գոյականները:

Ինքն – *ինքնակամություն, ինքնագլխություն, ինքնահոժարություն, ինքնիշխանություն, ինքնօրինություն, ինքնավարություն, ինքնորոշություն, ինքնուրույնություն,*

Կամք – *ազատակամություն, կամազատություն, հոժարակամություն,*

կամավորություն, կամավորականություն, կամակորություն, կամայականություն,

Ան - *անբռնադատություն, անբռնադատելիություն, աներկյուղություն, անվախություն, անվեհերություն, անգործություն, անբանություն, անզբաղություն, անաշխատություն:*

Հետաքրքրական է, որ թե՛ անգլերենում և թե՛ հայերենում *self-* նախածանցակերպի և *ինքն* արմատի կիրառումը ցույց է տալիս *անձի ազատությունը գործելու այնպես, ինչպես ցանկանում է, իսկ սո/ան-* նախածանցն օգտագործվում է ցույց տալու համար *պարտավորություններից, սահմանափակումներից ազատ լինելը:*

Օգտվելով Ռոժեի էլեկտրոնային թեզաուրուս բառարանից, ինչպես նաև անգլերենի և հայերենի բացատրական և հոմանիշային բառարաններից՝ ուսումնասիրել ենք նաև «ազատություն» հասկացույթի ածականների և բայերի բաղիմաստային խմբերը:

Զուգադրվող լեզուներում կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ երկու լեզուներում էլ “*free*” և “*ազատ*» ածականները հիմնականում ունեն *սահմանափակումներից, պարտավորություններից ազատ*, ինչպես նաև *պարապ, անգործ, անզբաղ* իմաստները: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ անգլերենում “*free*” (*ազատ*) ածականն ունի *անվճար* (without charge) իմաստը, որը, սակայն, բնորոշ չէ “*ազատ*» ածականին հայերենում: Անգլերենում “*free*” ածականը կարող է օգտագործվել մի շարք գոյականների հետ՝ ձեռք բերելով անվճար իմաստը, օրինակ՝ *free education* /անվճար կրթություն/:

«Ազատություն» հասկացույթի խորքային առանձնահատկությունները վեր հանելու համար անհրաժեշտ ենք համարել վերլուծել տվյալ բաղիմաստային խումբը կազմող բայերը: Անգլերենում այն արտահայտված է “*to free*” բայով, իսկ հայերենում՝ “*ազատել*» բայով, որոնք ցույց են տալիս գործողություն, որը *հանգեցնում է ազատության:*

«Ազատություն» հասկացույթի բառարանային ուսումնասիրությունները փաստում են, որ վերջինս կրում է երկակի բնույթ, հետևաբար մենք ուսումնասիրել ենք ոչ միայն այն բայերը, որոնք ցույց են տալիս «*ազատություն*» ձեռք բերելու գործողություն, այլ նաև այն բայերը, որոնք ցույց են տալիս *գործողություն, որը հանգեցնում է «ազատության» կորստի:* Հարկ է նշել, որ ուսումնասիրության նյութի աղբյուր են անգլերենի և հայերենի բացատրական բառարանները, որոնց վերլուծության արդյունքում առանձնացրել ենք հետևյալ

չորս հիմնական խմբերը՝ *ազատության ձեռքբերման բայեր* (to give up, to get rid of, to escape, ազատվել, հրաժարվել, փախչել), *ազատություն պարզելու բայեր* (to release, to unwind, to unchain, ազատ արձակել, լծից ազատել, կապանքներից ազատել), *ազատության կորստի բայեր* (to yield, to restrict oneself, հնազանդվել, ինքն իրեն սահմանափակել), *ազատությունից զրկման բայեր* (to blockade, to imprison, շրջափակել, ազատազրկել):

Անգլերեն բացատրական բառարանների, ինչպես նաև Բրիտանական Ազգային Կորպուսի ուսումնասիրությունները փաստում են, որ “freedom” բառն ունի ավելի շատ բառարանային սահմանումներ և կիրառության հաճախականություն, մինչդեռ “liberty” բառն ունի եզրային բնույթ: Ամփոփելով գոյականների հոմանիշային շարքերի և տեսականիշների ուսումնասիրությունը՝ կարելի է եզրակացնել, որ անգլերենում «ազատություն» հասկացույթն ունի ավելի շատ թվով հոմանիշներ, քան հայերենը, ինչպես նաև անգլերենում վերջինս ներկայացված է մի շարք տարբերակված եզրույթներով ըստ տարբեր բնագավառների՝ քաղաքական, տնտեսական, առևտրային և այլն:

«Ազատություն» հասկացույթի ածականների և բայերի բառիմաստային խմբերի ուսումնասիրությունը զուգադրվող լեզուներում փաստում է, որ անգլերենում “free” ածականը զարգացրել է նաև «անվճար» իմաստը, որը բնորոշ է «ազատ» ածականին հայերենում: Հաշվի առնելով «ազատություն» հասկացույթի երկակի բնույթը՝ առանձնացրել ենք նաև ազատության ձեռքբերման և ազատության կորստի, ազատությունից զրկման բայեր:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է «ազատություն» հասկացույթի բառարանային սահմանումների վերլուծությունը, ինչպես նաև ուսումնասիրվող հասկացույթի իմաստային դաշտի առանձնահատկությունների վերհանումն անգլերենում և հայերենում: Իմաստային դաշտի համեմատական վերլուծությունը տարբեր լեզուների նյութի հիման վրա հնարավորություն է տալիս վեր հանելու հոմանիշային շարքերում ներկայացված բառերի իմաստաբանական և գործառական-ոճական տարբերությունները:

Քանալի բառեր - իմաստային դաշտ, բառիմաստային խումբ, տեսականիշ, հասկացույթ:

СОПОСТАВИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ СЕМАНТИЧЕСКОГО ПОЛЯ КОНЦЕПТА “СВОБОДА” В АНГЛИЙСКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ

АНАИТ МАКАРЯН

Данная статья посвящена анализу понятийной стороны концепта “свобода”. Английские и армянские дефиниции содержат как общие, так и отличительные признаки. В английских словарях рассматриваемый концепт объясняется более детально, чем в армянских. Сравнительный анализ семантического поля концепта “свобода” показывает, что семантические ряды, формирующие семантическое поле концепта “свобода”, содержат отличительные признаки, характерные для исследуемых языков.

Ключевые слова – семантическое поле, лексико-семантическая группа, гипероним, концепт.

CONTRASTIVE ANALYSIS OF SEMANTIC FIELD OF THE CONCEPT “FREEDOM” IN ENGLISH AND ARMENIAN

ANAHIT MAKARYAN

The present article dwells on the definitional analysis of the concept “freedom” in English and Armenian, as well as probes into the study of the semantic field of the above-mentioned concept with the aim of revealing the semantic and structural peculiarities of the concept in question. The study of synonymic rows helps to disclose different nuances of meaning which determine specific national perception of the world picture. Thus, the analysis of the semantic field of the concept under study in English and Armenian has revealed some peculiarities which are specific for one language solely.

Key words - semantic field, lexico-semantic group, hyperonym, concept.